



Ստրասբուրգ/Վարշավա, 26-ը օգոստոսի, 2005թ.

Եզրակացություն թիվ 310/2004

CDL-EL(2005)028

Միայն անգլերեն

Հայերեն ոչ պաշտոնական
թարգմանություն

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԻՋՈՑՈՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
(ՎԵՆԵՏԻԿՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ)

2005թ. մայիսի 17-ին Հայաստանի Հանրապետության
Ազգային ժողովի կողմից ընդունված

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՎԵՐՋՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ՆԵՐԿԱՅԱՅՎՈՒՄ Է
ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԻՋՈՑՈՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ
ՎԵՆԵՏԻԿՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ)

ԵՎ
ԵԱՀԿ-Ի ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ (ԺՀՄԲ) ԿՈՂՄԻՑ

Պրն. Տաավի ԱՆՆՈՒՄԻ (Վենետիկյան հանձնաժողովի անդամ, Էստոնիա)
Պրն. Ջեսի ՊԵԼԳՐԻՄԻ (ԵԱՀԿ/ԺՀՄԲ, ընտրությունների փորձագետ)
մեկնաբանությունների հիման վրա

Բովանդակություն

I.	ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
II.	Ընտրական օրենսգրքի փոփոխությունները.....	4
Ա.	Ընտրական և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների կազմավորումը	4
Բ.	Տեղամասային ընտրական հանձնաժողովների կազմավորումը	7
Գ.	Թեկնածությունների առաջադրումը	7
Դ.	Քվեարկելու իրավունքները.....	8
Ե.	Ընտրացուցակները	9
Զ.	Քվեաթերթիկները, քվեարկությունը և թափանցիկությունը	10
Է.	Բողոքները և դիմումները.....	11
III.	Եզրահանգում.....	13

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Սույն համատեղ եզրակացությունը ներկայացվում է ի շարունակություն Վենետիկյան հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կողմից հայաստանի հանրապետության Ընտրական օրենսգրքի վերաբերյալ նախկինում ներկայացրած եզրակացությունների (CDL-AD(2005)019): Մասնավորապես, սույն եզրակացությունը հիմնվում է ներկայացված ամենավերջին եզրակացության և Ընտրական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի վրա, ներառյալ հետևյալը.

- Միջանկյալ համատեղ եզրակացություն հայաստանի հանրապետության Ընտրական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի վերաբերյալ, 2005թ. ապրիլի 15-ի և 2005թ. հունիսի 14-ի տարբերակներ (CDL-AD(2005)019),
- հայաստանի հանրապետության Ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծ, որն ընդունվել է 2005թ. մայիսի 17-ին հայաստանի հանրապետության Ազգային ժողովի կողմից (CDL-EL(2005)024),
- Ընտրական օրենսգրքի 2002թ. օգոստոսի 3-ին ընդունված տարբերակ (CDL(2003)052):

2. Փոփոխությունների մեջ հաշվի է առնված ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի և Վենետիկյան հանձնաժողովի նախկին համատեղ եզրակացություններում զետեղված առաջարկությունների որոշ մասը: Փոփոխությունների արդյունքում ընտրությունների իրավական դաշտը բարելավվում է: Օրինակ, բարելավումներ են կատարվել ընտրական հանձնաժողովների անդամների վերապատրաստման և սերտիֆիկացման, ընտրողների ազգային գրանցամատյանի ներդրման, վստահված անձանց իրավունքների և երաշխիքների, ընտրական ընթացակարգերի և ընտրությունների արդյունքների ամփոփման և հրապարակման առումներով: Հայաստանի հանրապետությունների իշխանությունների կողմից նման բարելավումների կատարումը ողջունելի է:

3. Ընտրական օրենսգիրքը, սակայն, դեռ կարելի է բարելավել, հատկապես ընտրությունների վարչարարության և ընտրական բողոքների ոլորտներում: Առանձնակի մտահոգություն են պատճառում ընտրական բողոքների և դիմումների ներկայացման վերաբերյալ դրույթները, որոնք չեն ապահովում լուրջ իրավական դաշտ ընտրական վիճերի լուծման և ընտրական իրավունքների պաշտպանության համար:

4. Բացի այդ, չնայած որ Ընտրական օրենսգրքում փոփոխություններն ընդհանուր իմաստով դրական տեղաշարժ են ապահովում, Օրենսգրքի բարեխիղճ կիրառումը շարունակում է մնալ իսկական ժողովրդավարական ընտրությունների անցկացման կարևորագույն նախապայմանը: Ընտրական նորմերը նպաստում են արդար ընտրությունների անցկացմանը և ժողովրդավարական արդյունքների ստացմանը միայն այն դեպքում, երբ իրագործման առումով դրանք իշխանությունների կողմից

չեն արհամարհվում կամ չարաշահվում: Միջազգային դիտորդների մեծ մասը նշել է, որ Հայաստանում ընտրությունների անցկացման լրջագույն թերությունը պայմանավորված է Ընտրական օրենսգրքի կիրառմամբ, այլ ոչ՝ բուն Ընտրական օրենսգրքի դրույթներով: Կարևորագույն մտահոգություններից հարկ է հիշատակել ընտրական օրենսդրությունը խախտողների դեմ իշխանությունների կողմից որևէ քայլեր չձեռնարկելը: Ուստի, փոփոխությունների հաջողությունը կախված է պրակտիկայում դրանց կիրառումից:

5. Սույն մեկնաբանություններն արտացոլում են ԵԱՀԿ/ԺՎՄԻԳ-ի և Վենետիկյան հանձնաժողովի կողմից Հայաստանի իշխանություններին ներկայացված նախկին համատեղ եզրակացությունները և այլ գրավոր փաստաթղթերը: Այնուամենայնիվ, Վենետիկյան հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՎՄԻԳ-ի կողմից նախկինում տրված եզրակացությունները, դիտարկումները, դիտորդությունները և առաջարկությունները նույնպես պետք է այստեղ հաշվի առնել, քանի որ դրանց վերլուծությունը լրացուցիչ հիմնավորում է այստեղ ներկայացվող մեկնաբանությունները:

II. ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐԷԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԵՎ ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

6. Ընտրությունների կազմակերպման և անցկացման օբյեկտիվության, անաչառության ու թափանցիկության նկատմամբ վստահության պակասի խնդիրը հիշատակվել է Հայաստանում անցկացված ընտրությունների վերաբերյալ դիտորդական հաշվետվությունների մեծ մասում: Դրա հիմնական պատճառը մինչ օրս եղել է այն, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ) և Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի (ԸԸՀ) կազմում քաղաքական տարբեր ուժերը ոչ հավասարակշիռ են ներկայացված: Այս փոփոխությունների հիման վրա փոխվում են ԿԸՀ-ի և ԸԸՀ-ների կազմավորման դրույթները: Օրենսգրքի 35-րդ հոդվածի համաձայն, ԿԸՀ-ի անդամները նշանակվում են հետևյալ կարգով.

- Ազգային ժողովում խմբակցություն ունեցող յուրաքանչյուր կուսակցության մշտապես գործող մարմնի որոշմամբ, իսկ դաշինքի դեպքում՝ դաշինքի անդամ կուսակցությունների մշտապես գործող մարմինների համատեղ՝ ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ նշանակված մեկական անդամից,
- Հանրապետության Նախագահի նշանակած մեկ անդամից,
- Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի կողմից՝ Հայաստանի Հանրապետության ընդհանուր իրավասության դատարանների դատավորների կազմից,¹
- Վճռաբեկ դատարանի նշանակած վճռաբեկ դատարանի մեկ դատավորից:

¹ Մինչև Ազգային ժողովի հաջորդ ընտրությունները, ԿԸՀ-ի այս անդամը նշանակվում է գործող Ազգային ժողովի առաջին նստաշրջանի ընթացքում հաստատված պատգամավորական խմբի կողմից:

7. ԸԸՀ-ի անդամները նշանակվում են ԿԸՀ-ի անդամների կողմից՝ «Կենտրոնական ընտրական հանձնաժողովի մեկ անդամ՝ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի մեկ անդամ» սկզբունքով (Հոդված 36): Նախկինում ԸԸՀ-ների անդամները նշանակվում էին գործող կամ լուծարված Ազգային Ժողովում խմբակցություն ունեցող կուսակցությունների և կուսակցական դաշինքների մշտական մարմինների կողմից (յուրաքանչյուրը մեկ անդամ) և Հանրապետության Նախագահի կողմից (երեք անդամ): Այսպիսով, փոփոխությունների արդյունքում, նախկինում Հանրապետության Նախագահի կողմից նշանակված երկու անդամի փոխարեն նշանակվում են երկու դատավորներ՝ դատական մարմինների կողմից: Որպես այդպիսին, այս փոփոխությունները դրական տեղաշարժ են հանդիսանում, քանի որ դատական համակարգի ներգրավումը պետք է որ կրճատի իշխանության գործադիր թևի կամ որևէ մեկ քաղաքական ուժի անհարկի ազդեցությունն այդ հանձնաժողովների վրա: Նշված փոփոխությունների արդյունքում ԿԸՀ-ի և ԸԸՀ-ների նշանակման գործընթացի քաղաքական բազմակարծությունը բարձրանում է:²

8. Փոփոխություններով նախատեսվում է ԿԸՀ-ի և ԸԸՀ-ների կազմում դատավորների նշանակում: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը և Վենետիկյան հանձնաժողովը ողջունել են դատական համակարգի ներգրավումն ընտրական հանձնաժողովների կազմավորման գործընթացում, քանի որ դա կարող է բարձրացնել հանձնաժողովների անաչառության մակարդակը: Փոփոխությունների մեջ հաշվի է առնվել այն փաստը, որ բողոքների և դիմումների վերաբերյալ դրույթներով թույլատրվում է ընտրական հանձնաժողովների որոշումների, գործողությունների և անգործության դատական վերանայում, և ըստ այդմ, ընտրական հանձնաժողովի անդամ դատավորին արգելվում է քննել այն դիմումները, որոնք կապված են տվյալ ընտրական հանձնաժողովի գործողությունների (անգործության) հետ (Հոդված 40(14)): Սա համահունչ է Միջանկյալ համատեղ եզրակացության մեջ արված առաջարկությանը:

9. Վենետիկյան հանձնաժողովը և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը չեն կարող կանխատեսել, թե արդյոք ընդունված փոփոխությունների իրագործումը պրակտիկայում կարվի բարելավո՞ւմ: Ուստի, փոփոխությունների արդյունքում անաչառ և արհեստավարժ ընտրական գործընթացների ապահովման հանգամանքը կախված կլինի ապագայում ընտրությունների փաստացի կազմակերպումից և անցկացումից: Կարելի է հուսալ, որ փոփոխությունները բարելավո՞ւմ պրակտիկ իրագործում կստանան, և որ լուրջ ջանքեր կգործադրվեն ընտրությունների կազմակերպման և անցկացման նկատմամբ վստահությունը բարձրացնելու ուղղությամբ: Այնուհանդերձ, որևէ օրենք չի կարող երաշխավորել ընտրական հանձնաժողովների անդամների ազնիվ և անկողմնակալ գործելակերպը: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը և Վենետիկյան հանձնաժողովը վերստին ընդգծում են, որ ընտրական

² Քաղաքական բազմակարծությունը ԵԱՀԿ-ի շրջանակներում հիմնարար հանձնառություն է, որը նշվել կամ կրկնվել է ԵԱՀԿ-ի առնվազն ութ փաստաթղթերում: Տես 1990թ. Կոպենհագենյան փաստաթուղթը, 1990թ. Փարիզյան փաստաթուղթը, 1991թ. Մոսկովյան փաստաթուղթը, 1992թ. Հելսինկյան որոշումները, 1994թ. Բուդապեշտի գազաթնաժողովի հռչակագիրը, 1994թ. Բուդապեշտյան որոշումները, 1996թ. Լիսաբոնյան գազաթնաժողովի հռչակագիրը և 1999թ. Եվրոպական անվտանգության ստամբուլյան խարտիան: Տես նաև Վենետիկյան հանձնաժողովի «Ընտրական գործընթացներում լավ գործելակերպի կանոնագրի» 1.2.3 գլուխը:

հանձնաժողովների կազմավորման և ընտրությունների կազմակերպման ու անցկացման վերաբերյալ դրույթների բարելավիչ կատարումը մնում է կարևորագույն խնդիրը:

10. Փոփոխված 38-րդ հոդվածը Հանրապետության Նախագահին իրավունք է վերապահում ընտրություններից 20 օր առաջ ԿԸՀ-ում և ԸԸՀ-ներում առաջացած թափուր տեղերի նշանակում կատարել, եթե թափուր մնացած տեղերի թիվը ավելի է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի երկու երրորդից: Նման արտակարգ իրավիճակում Նախագահի կողմից նշանակված անձը պետք է լինի դատական համակարգի անդամ, և նրա լիազորությունները պետք է դադարեն ընտրություններից 10 օր անց, որից հետո նոր նշանակում է կատարում այն մարմինը, որն ի սկզբանե նշանակել էր տվյալ տեղը զբաղեցնող անդամին (Հոդված 38(3¹)-ի վերջին նախադասությունը): Այսպիսով, սկզբնապես տվյալ տեղը զբաղեցնող անդամին նշանակող մարմինն իրավասու չէ նշանակել նոր անդամին, քանի դեռ ընտրություններից հետո Հանրապետության Նախագահը չի ընտրել նոր անդամին: Ըստ երևույթին, նախքան Նախագահի կողմից այդ անդամին նշանակելը, սկզբնապես տվյալ տեղը զբաղեցնող անդամին նշանակող մարմինն ժամանակ չի հատկացվում հանձնաժողովում առաջացած թափուր տեղի համար անդամ նշանակելու նպատակով: Ավելին, Հանրապետության Նախագահը պարտավոր չէ լրացնել ավելի վաղ թափուր դարձած տեղերը: Դա կարող է Նախագահին հնարավորություն ընձեռել, որպեսզի նա անդամների նշանակի այն թափուր տեղերի համար, որոնց համար նշանակումը պետք է կատարեն Հանրապետության Նախագահին ընդդիմադիր կուսակցությունը կամ կուսակցությունները, և որպեսզի նա թափուր թողնի մյուս տեղերը: Նման անկանխատեսելիությունից հարկ է խուսափել:

11. Փոփոխություններով նախատեսվում է, որ կուսակցությունների դաշինքի դեպքում դաշինքի անդամ կուսակցությունների մշտապես գործող մարմինների համատեղ՝ ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ նշանակվում են ԿԸՀ-ի անդամներ (Հոդված 35(1)1)): Եթե այդ որոշումը սահմանված ժամկետում չի կայացվում, ապա նշանակման իրավասությունն անցնում է «համապատասխան խմբակցությանը»: Որևէ կոնկրետ դրույթ չի նախատեսված այն դեպքի համար, երբ կուսակցությունների դաշինքը մասնատվում է: Ընտրական օրենսգրքի հիման վրա պարզ չէ, թե արդյոք կուսակցությունների դաշինքի դեպքում «համապատասխան խմբակցությունը» հեշտորեն կարող է որոշվել (հատկապես դաշինքի մասնատումից հետո):

12. Չնայած որ ԿԸՀ-ի և ԸԸՀ-ների նշանակման իրավասությունները փոփոխությունների համաձայն տարբեր ատյանների են վերապահվում, նշանակման գործընթացը պարտադիր կերպով ավարտվում է նախագահական հրամանագրով (Հոդված 35(3)). «Կենտրոնական ընտրական հանձնաժողով կազմավորող մարմինների առաջարկությունների հիման վրա կենտրոնական ընտրական հանձնաժողովի կազմը սահմանվում է Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով»:³ Չի նշվում, թե արդյոք Նախագահի հրամանագրի

³ Թարգմանված տեքստում շփոթություն կա, քանի որ փոփոխված 36(1) հոդվածի վերջին նախադասության մեջ կրկնվում է միևնույն դրույթը, չնայած որ այս հոդվածը պետք է կարգավորի ոչ

անհրաժեշտությունը զուտ ֆորմալություն է, թե՞ Նախագահին ունի վնասող, մերժելու կամ այդ ֆորմալության հիման վրա նշանակումը կանխելու իրավունք: Ընդունված տեքստի համաձայն, նշանակող կազմակերպությունները «ներկայացնում են» Նախագահին, և վերջինս պարտավոր չէ ընդունել այդ «ներկայացումը»: Նախընտրելի կլիներ ներառել նաև տեքստ, որով Նախագահի վրա միանշանակ պարտավորություն կդրվեր՝ ներկայացումից հետո արագորեն ընդունելու հրամանագիրը:

Բ. ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

13. 37-րդ հոդվածով նախատեսվում է, որ Տեղամասային ընտրական հանձնաժողովները (ՏԸՀ) «Տեղամասային ընտրական հանձնաժողովի (ՏԸՀ) անդամներին նշանակում են համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամները՝ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի մեկ անդամ՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի մեկ անդամ սկզբունքով»: Այսպիսով, ԸԸՀ-ի անդամների նշանակման սկզբունքների վերաբերյալ վերևում արտահայտված մտահոգությունները կիրառելի են նաև ՏԸՀ-ների դեպքում: Բացի այդ, ենթադրվում է, որ ԸԸՀ-ների կազմում նշանակվող դատավորները պարտավոր չեն ՏԸՀ-ների կազմում դատավոր նշանակել, այլ կարող են նշանակել ցանկացած վերապատրաստված և սերտիֆիկացված անձի, որն իրավասու է ՏԸՀ-ի անդամ դառնալ:

14. 38-րդ հոդվածի 3.1 կետում կատարված փոփոխությամբ նախատեսվում է, որ քվեարկությանը նախորդող 15 օրերից մինչև քվեարկության օրվանից մեկ օր առաջ, ՏԸՀ-ում առկա թափուր տեղերը լրացվում են վիճակահանությամբ, ընտրությունների անցկացման համար ԿԸՀ-ի ուսուցումն անցած եւ տեղամասային ընտրական հանձնաժողովներում աշխատելու համար վկայագիր ունեցող անձանց թվից: Վիճակահանություն անցկացնելու կարգը պետք է ավելի մանրամասնորեն սահմանել՝ նախատեսելով դրա կոնկրետ մեխանիզմը և, մասնավորապես, ամրագրելով վիճակահանությանը հետևելու՝ վստահված անձանց, միջազգային և տեղական դիտորդների իրավունքը: Բանի որ ՏԸՀ-ներն ընտրական գործընթացի կարևորագույն օղակ են, շատ կարևոր է ՏԸՀ-ների բոլոր անդամների նշանակման թափանցիկությունը ներաշխարհել՝ այդ կերպ նպաստելով ընտրական գործընթացների նկատմամբ հանրության վստահության բարձրացմանը:

Գ. ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄԸ

15. Թեկնածուների ցուցակում կանանց անունների պահանջվող նվազագույն տոկոսաչափը 5%-ից հասցվել է 15%-ի (փոփոխություն 100(2) հոդվածում): Դա դրական փոփոխություն է: Փոփոխություններով նաև նախատեսվում է, որ «ընտրական ցուցակի առնվազն յուրաքանչյուր տասներորդը պետք է լինի կին»:

թե՛ ԿԸՀ-ի, այլ՝ ԸԸՀ-ների կազմավորումը: Ենթադրվում է, որ Հանրապետության Նախագահը նույնպես ընդունում է ԸԸՀ-ների անդամների նշանակման մասին հրամանագրեր:

Հարկ է կրկին հիշատակել, որ կանանց քաղաքական ներկայացվածության իրական բարձրացման հնարավոր չէ հասնել ընտրությունների մեխանիզմների նորմերով միայն: Ուստի, սույն փոփոխությանն անհրաժեշտ է գումարել լրացուցիչ օրենսդրական և ոչ օրենսդրական միջոցառումներ, որոնք կանանց ներկայացվածությունը կբարձրացնեն: Այդպիսի միջոցառումների օրինակներ կարելի է գտնել Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի կողմից 2004թ. հոկտեմբերի 5-ին ընդունված թիվ 1676 (2004) երաշխավորության մեջ:

16. Փոփոխությունների արդյունքում վերանում է թեկնածուի առաջադրումը հիմնավորելու համար ստորագրություններ հավաքելու պահանջը: Դա սկզբունքորեն ընդունելի փոփոխություն է: Ի հակադրություն նախկինում ներկայացված տարբեր նախագծերի, Օրենսգրքի փոփոխված տարբերակում չի բարձրացվել պահանջվող ընտրական գրավի չափը չի ավելացվել (Հոդվածներ 71(1), 101(1)(1) և 108(2)), թողնվելով նույնը, ինչ նախորդ ընտրությունների դեպքում, այսինքն, նախագահական ընտրությունների ժամանակ, օրինակ, նվազագույն աշխատավարձի 5,000-ապատիկը, համամասնական ընտրությունների դեպքում՝ 2,500-ապատիկը, իսկ մեծամասնականի դեպքում՝ 100-ապատիկը: Դա համահունչ է Վենետիկյան հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կողմից նախկինում արված առաջարկություններին: Բանի որ չկան տվյալներ այն մասին, որ դրածո թեկնածուների թվաքանակը կարող է բարձր լինել, ընտրական գրավի այդ մակարդակը, ըստ նրկային, խելամիտ է:

17. 78-րդ և 111-րդ հոդվածները փոփոխվել են, և թեկնածուները կարող են գրավոր դիմում ներկայացնելու դեպքում հանել իրենց թեկնածությունները: Նախկինում չկային որևէ դրույթներ թեկնածությունների հանման գործընթացի վերաբերյալ: Գրավոր դիմում ներկայացնելու պահանջը մասամբ համահունչ է Վենետիկյան հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կողմից նախկինում արված առաջարկությանը: Այնուհանդերձ, այս հոդվածները դեռ կարելի է բարելավել՝ սահմանելով այն հիմքերը, որոնք, եթե այդպիսիք անհրաժեշտ են, պետք է ներկայացվեն թեկնածությունը հանելը հիմնավորելու համար:

Դ. ԲՎԵԱՐԿԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

18. Փոփոխությունները չեն ներառում նախկինում արված առաջարկություններն այն մասին, որ պետք է նախատեսել դրույթներ, որոնք քվեարկելու հնարավորություն կտան այն ընտրողներին, ովքեր ի վիճակի չեն գնալ ընտրական տեղամաս (օրինակ, անկողնուն գամված մարդկանց): Չնայած որ նման դեպքերում ավելանում է ընտրակեղծիքի հնարավորությունը, քվեարկելու իրավունքը մարդու կարևորագույն իրավունքներից է, և բոլոր հնարավոր միջոցները պետք է ձեռնարկվեն այդ իրավունքի պաշտպանությունն ապահովելու համար: Տեքստում մնացել է 2(6) հոդվածը, որը զինված ուժերի անդամներին արգելում է մասնակցել տեղական ինքնակառավարման մարմինների և Ազգային Ժողովի մեծամասնական ընտրակարգով անցկացվող ընտրություններին: Այս խնդրին անհրաժեշտ է կրկին անդրադառնալ: Նշված հոդվածները չեն երաշխավորում Հայաստանի Հանրապետության բոլոր քաղաքացիների քվեարկելու իրավունքների

իրականացումը: Քաղաքացիների քվեարկելու իրավունքների սահմանափակումները Հայաստանի իշխանությունների կողմից հիմնավորվում են այն փաստարկով, թե նման դեպքերում առաջ եկող ընտրակեղծիքի դրսևորումներն անհնար է կանխել: Այնուհանդերձ, միջազգային չափանիշների համաձայն պետությունը միանշանակ պարտավորություն ունի՝ «ձեռնարկելու արդյունավետ միջոցառումներ՝ երաշխավորելու քվեարկելու իրավունք ունեցող բոլոր անձանց կողմից այդ իրավունքի իրականացումը»:⁴ Գալիս է պահ, երբ «անկանխելի ընտրակեղծիքի» փաստարկը բավարար չէ նշված քաղաքացիներին իրենց ընտրական իրավունքներից զրկելը հիմնավորելու տեսակետից:

19. Փոփոխված Ընտրական օրենսգրքով առանձին չեն կարգավորվում զինված ուժերում ծառայողների, կալանավորվածների և արտերկրում գտնվող քաղաքացիների քվեարկելու իրավունքները: Նոր 10-րդ հոդվածը կարգավորում է այդ անձանց ընտրացուցակներում ներառելու կարգը: Նոր 56(5) հոդվածով նախատեսվում են ընդհանուր դրույթներ քվեարկության այն ընթացակարգերի մասին, որոնք պետք է կիրառվեն նաև զինված ուժերում ծառայողների, դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչություններում գրանցված անձանց, ինչպես նաև կալանավորված կամ ձերբակալված անձանց նկատմամբ: Չնայած որ այդ դեպքերում կարելի է կիրառել քվեարկության սովորական կարգը, հարկ է ընդգծել, որ նման դեպքերում Ընտրական օրենսգրքի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունը պետք է առանձնակի զգուշությամբ իրականացնել: Կալանքի տակ գտնվողները կամ զինվորական ծառայողներն առանձնապես խոցելի են այս կամ այն կերպ քվեարկելու շահարկումներից:

Ե. ԸՆՏՐԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ

20. Փոփոխությունների համաձայն ստեղծվում է ընտրողների մշտական ազգային գրանցամատյան: Դա դրական քայլ է, ինչպես նշվել է նախկինում նշված եզրակացություններում: Լրացուցիչ ընտրացուցակների մասին դրույթները (14¹ հոդված) նույնպես բարելավվել են՝ հաշվի առնելով Վենետիկյան հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կողմից նախկինում ներկայացված առաջարկությունները: Վերջնական փոփոխություններով գրեթե ամբողջովին բացառվում է ԿԸՀ-ի և ԸԸՀ-ների դերն ընտրացուցակների ձևավորման հարցում: Օրինակ, նախկին փոփոխությունների նախագծի համեմատ, ԿԸՀ-ի և ԸԸՀ-ների՝ ընտրացուցակների ձևավորումն ու ընթացիկ վարումը վերահսկելու պարտավորությունը վերացվել է: Բացի այդ, ընդունված փոփոխությունների համաձայն, ԿԸՀ-ն չի ընդունելու կանոնակարգեր ընտրացուցակների կրկնօրինակների հրապարակման կամ տարածման վերաբերյալ: Ենթադրվում է, որ այդ կանոնակարգերն ընդունվելու են լիազոր մարմնի կողմից: Սկզբունքորեն, ընտրացուցակների հետ կապված

⁴ Տես Մարդու իրավունքների կոմիտեի Ընդհանուր դիտարկումները 25(57), Ընդհանուր դիտարկումներ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 40-րդ հոդվածի 4-րդ կետի վերաբերյալ, որը կոմիտեի կողմից ընդունվել է 1510-րդ նստաշրջանի ընթացքում, ՄԱԿ-ի փաստաթուղթ, CCPR/C/21/Rev.1/Add.7 (1996), կետ 11: Տես նաև Հիստոն ընդդեմ Միացյալ Թագավորության, հայցադիմում թիվ 74025/01, Մարդու իրավունքների եվրոպական դատարան (30-ը մարտի, 2004թ., ներկայացված է Պահապան պալատին):

պարտականությունները հատկորեն վերապահվել են մեկ կառույցի (այսինքն, լիազոր մարմնին), որն ընդունելի է: Պրակտիկայում, ԿԸՀ-ի և լիազոր մարմնի միջև անհրաժեշտ է համագործակցություն, և Ընտրական օրենսգրքից համապատասխան դրույթները հանելը չպետք է խոչընդոտի այդ համագործակցությանը:

2. ՔՎԵԱԹԵՐԹԻԿՆԵՐԸ, ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԹԱՓԱՆՅԻԿՈՒԹՅՈՒՆԸ

21. Փոփոխված 49¹(7) հոդվածով փոխվում են քվեաթերթիկների նմուշների հաստատման վերաբերյալ նորմերը: Փոփոխված Օրենսգրքով նախատեսվում է, որ քվեաթերթիկների որոշ նմուշներ հաստատվում են ԿԸՀ-ի, իսկ որոշ նմուշներ՝ ԸԸՀ-ի կողմից: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը և Վենետիկյան հանձնաժողովը նախկինում առաջ քաշել են Ազգային Ժողովի մեծամասնական ընտրակարգով անցկացվող ընտրությունների համար քվեաթերթիկի՝ ԸԸՀ-ի կողմից նախապատրաստման խնդիրը: Ավելի լավ կլիներ, եթե ԿԸՀ-ն շարունակեր հաստատել քվեաթերթիկների նմուշները բոլոր ընտրությունների, հատկապես Ազգային Ժողովի ընտրությունների, այդ թվում՝ նաև մեծամասնական ընտրակարգով անցկացվող ընտրությունների համար:

22. «Բոլորին դեմ» քվեարկելու տարբերակն մնում է Ընտրական օրենսգրքում՝ այդ կերպ չարտացոլելով նախկինում արված առաջարկությունները: Սկզբունքորեն, քվեարկողներին պետք է քաջալերել, որպեսզի նրանք քվեարկեն իրենց նախընտրած թեկնածուի կամ կուսակցության օգտին՝ այդ կերպ պատասխանատու լինելով ընտրվող մարմնի համար:

23. 58-րդ հոդվածում կատարված փոփոխություններում հաշվի է առնվել նախկինում արված այն առաջարկությունը, որ նշումով քվեաթերթիկը վավեր է, եթե քվեարկողի մտադրությունը պարզ է և աներկբա: 58-րդ հոդվածի ներկրորդ կետով նախատեսվում է այս նորմը, և սահմանվում է լրացուցիչ պահանջ, ըստ որի քվեաթերթիկը չպետք է պարունակի որևէ լրացուցիչ նշում, որը կարող է բացահայտել քվեարկողի ինքնությունը: Այնուհանդերձ, 58-րդ հոդվածին ավելացվել է լրացուցիչ 6-րդ ենթակետ, որով նախատեսվում է, որ քվեաթերթիկն անվավեր է, եթե «խախտված է սույն օրենսգրքի 57 հոդվածով սահմանված՝ քվեաթերթիկում նշում կատարելու կարգը»: Այս դրույթը կարծես չափազանց խիստ է, քանի որ այն թույլ է տալիս չնչին խախտումների դեպքում անգամ անվավեր ճանաչել քվեաթերթիկը, նույնիսկ երբ քվեարկողի ինքնությունը չի բացահայտվել:

24. Չնայած որ նախկին նախագծերում տեղ էր գտել թանաքոտման մասին դրույթ (Հոդված 55(2)), ընդունված փոփոխությունների տեքստից այդ կարգը հանվել է: Թանաքոտումն ընտրակեղծիքի դեմ պայքարի կարևորագույն միջոցառում է, որը թույլ է տալիս կանխել «բազմակի քվեարկությունը»: Նախագծից այս դրույթը հանելը դրական քայլ չէ: Կարելի է հուսալ, որ ընտրություններ անցկացնողները կկարողանան ընտրակեղծիքը կանխելու այլ միջոցներ գտնել, հատկապես

օգտագործելով ճշգրտված և ստույգ ընտրացուցակներ, ինչպես նաև՝ զգուշորեն ստուգելով քվեարկողի ինքնությունը:

25. 27¹(1)(7) հոդվածում կատարված փոփոխությունը վստահված անձանց իրավունք է վերապահում ներկա գտնվել ձայների հաշվարկի և ամփոփման ժամանակ: Դա նախկին եզրակացությանը համահունչ է: Հնարավոր է, որ ցանկալի կլինեն հիշեցնել ընտրությունների դիտորդության որոշ հիմնարար սկզբունքների և դիտորդների իրավունքների և պարտականությունների մասին, ներառյալ այն, որ «դիտորդությունը չպետք է սահմանափակվի միայն քվեարկության օրվանով, այլ պետք է ներառի թեկնածուների և, եթե անհրաժեշտ է, ընտրիչների գրանցման ժամանակահատվածը, ինչպես նաև նախընտրական քարոզարշավը: Այն պետք է հնարավորություն տա պարզել, թե արդյոք խախտումներ եղել են ընտրություններից առաջ, ընտրությունների արդյունքում կամ ընտրություններից հետո: Այն պետք է միշտ հնարավոր լինի ձայների հաշվարկի ընթացքում»:⁵

Է. ԲՈՂԱՔՆԵՐԸ ԵՎ ԴԻՄՈՒՄՆԵՐԸ

26. Ընտրական հանձնաժողովների գործողությունների, անգործության կամ որոշումների հետ կապված բողոքների և դիմումների ներկայացման վերաբերյալ փոփոխություններն ավելի մանրակրկիտ են, քան օրենսգիրքը նախատեսում էր նախկինում: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը և Վենետիկյան հանձնաժողովն առաջարկել էին, որպեսզի օրենքով ավելի մանրամասնորեն կարգավորվի բողոքների և դիմումների ներկայացման կարգը: Այնուհանդերձ, այս դրույթները պարունակում են անպարզություններ և ներքին հակասություններ և դեռ բարելավման կարիք ունեն:

27. Նախկինի պես, որոշ շփոթություն կա այն հարցում, թե որ կառույցը որ բողոքներն է քննում: 40-րդ հոդվածով նախատեսված է գործերի հետևյալ «ընդհանուր» հոսքը.

- Տեղամասային ընտրական հանձնաժողովի որոշումները՝ Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին:
- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշումները՝ առաջին ատյանի դատարաններին:
- Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումները՝ վերաքննիչ դատարան:

28. Գործում են հետևյալ բացառությունները.

- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշումները «Ազգային ժողովի՝ մեծամասնական ընտրակարգով ընտրությունների եւ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքների մասին»

⁵ Տե՛ս Վենետիկյան հանձնաժողովի «Ընտրական գործընթացներում լավ գործելակերպի կանոնագրքի» I մասի 3.2 կետը (CDL-AD(2002)023rev), «Ընտրությունների դիտումը»:

չեն բողոքարկվում առաջին ատյանի դատարաններ (40-րդ հոդվածի 2-րդ կետ):

- Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումները «ընտրությունների արդյունքների մասին» չեն բողոքարկվում վերաքննիչ դատարան (40-րդ հոդվածի 3-րդ կետ):

29. Փոփոխություններից պարզ չէ, թե որ կառույցն է քննում բողոքներն ընտրությունների արդյունքների ամփոփման (աղյուսակավորման) վերաբերյալ: 40-րդ հոդվածի 9-րդ կետով նախատեսվում է, որ «Ընտրությունների արդյունքների վերաբերյալ վեճերը, բացառությամբ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքների, լուծում է Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը»: Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքների վերաբերյալ վեճերը քննվում են առաջին ատյանի կամ վերաքննիչ դատարանների կողմից (40-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ կետեր): Հարկ է հստակեցնել, թե արդյոք «ընտրությունների արդյունքների մասին» վեճը (այս հասկացությունն օգտագործվում է 9-րդ, 10-րդ և 11-րդ կետերում) նույնն է, ինչ «ընտրությունների արդյունքների ամփոփման մասին» որոշումը (այս հասկացությունն օգտագործվում է 2-րդ և 3-րդ կետերում): Ներկայում դա տեքստից պարզ չէ: Պոտենցիալ դիմումատուների համար ավելի պարզ կլիներ, եթե տեքստն ավելի ստույգ լիներ, և եթե նշվեր կոնկրետ այն դատարանը, որին պետք է ներկայացնել դիմումը կամ բողոքը:

30. Ի վերջո, հարկ է կարգավորել, թե ինչ է տեղի ունենում, եթե խախտումը բողոքարկվում է «սովորական» կարգով, օրինակ, երբ բողոքը ներկայացվում է վերադաս ընտրական հանձնաժողով, որից հետո այդ հանձնաժողովին պարզ է դառնում, որ խախտումը բավականաչափ լուրջ է, որպեսզի ազդի ընտրությունների արդյունքների վրա: Այս դեպքում բողոքը տեխնիկական իմաստով ներկայացվել է ոչ այն մարմնին, որին պետք է ներկայացվեր (այն պետք է ներկայացված լիներ դատարան՝ 9-րդ, 10-րդ և 11-րդ կետերի համաձայն): Այնուհանդերձ, այս տեխնիկական պատճառի հիման վրա բողոքը մերժելը ճիշտ չէր լինի:

31. Վեճեր քննող մարմինների իրավասություններն առավելագույնս հստակորեն նախատեսված չեն: Պարզ չէ, թե որ մարմինը և որ կարգով է իրավասու ընտրություններն անվավեր հայտարարել, եթե կան խախտումներ, որոնք կարող են ազդած լինել ընտրությունների արդյունքների վրա: Փոփոխված 40(4) հոդվածով նախատեսվում է, որ ԸԸՀ-ն կարող է տեղամասում ընտրություններն անվավեր ճանաչել. այդ գործողությունը կատարելու համար բողոք կամ դիմում անհրաժեշտ չէ: Ենթադրվում է, որ նման որոշում կարող է կայացվել նաև այն դեպքում, երբ բողոք ներկայացնողը հասել է ԸԸՀ-ին: Փոփոխված 40(12) հոդվածով նախատեսվում է, որ առաջին ատյանի դատարանը կարող է տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններն անվավեր ճանաչել: Փոփոխված Օրենսգրքի համաձայն, առաջին ատյանի դատարանը չի կարող ընտրությունների արդյունքներն այս կերպ մասնակի անվավեր ճանաչել, եթե վերանայում է, օրինակ, ԸԸՀ-ի որոշումները: Օրենսգրքում անհրաժեշտ է ներառել ընտրությունների վերաբերյալ բողոքներ և դիմումներ քննող մարմինների իրավասությունների առավել լիարժեք ցանկ:

32. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կարող է սեփական նախաձեռնությամբ բեկանել Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների որոշումները (40-րդ հոդվածի 4-րդ կետ): Այնուհանդերձ, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը չի կարող վերանայել Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների որոշումները «Ազգային ժողովի՝ մեծամասնական ընտրակարգով պատգամավոր, տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավար կամ ավագանու անդամ ընտրվելու մասին»: Սահմանված չեն այն չափանիշները, որոնց հիման վրա պետք է պարզել, թե որ դեպքում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովն իրավասու կիրառել ԸԸՀ-ի որոշումը բեկանելու իրավասությունը: Այսպիսով, տպավորություն է ստեղծվում, որ ԸԸՀ-ն ցանկացած իրավիճակում կարող է լայն հայեցողությամբ իրականացնել իր այս իրավունքը: Այս հանգամանքին անհրաժեշտ է զգուշորեն անդրադառնալ, քանի որ նման իրավունքը չափազանց լայն է: Բացի այդ, պարզ չէ, թե ինչ տրամաբանական պատճառով են ԸԸՀ-ին նման լայն իրավունքներ վերապահվել, որից հետո կոնկրետ բացառություն է նախատեսվել Ազգային ժողովի՝ մեծամասնական ընտրակարգով պատգամավոր ընտրվելու մասին որոշումների համար: Պարզ չէ նաև, թե արդյոք Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն իրավասու է վերանայել Տեղամասային ընտրական հանձնաժողովի որոշումները:

33. Փոփոխություններով (Հոդված 40¹(4)) նախատեսվում են դիմումատուի որոշ դատավարական իրավունքներ: Մասնավորապես, դիմումատուն «պարբերաբար կարող է տեղեկանալ իր դիմումի քննարկման ընթացքի մասին, անհրաժեշտության դեպքում ներկայացնել դիմումում բերված փաստերն ապացուցող հիմնավորումներ»: Չնայած որ այս քայլը ճիշտ ուղղությամբ է արվել, սակայն այս տեքստը դեռ չի երաշխավորում դիմումի կամ բողոքի արդար, հրապարակային և թափանցիկ քննության իրավունքը:

34. Փոփոխված 40¹(3) հոդվածով նախատեսվում է դիմումատուի պարտավորությունը՝ հստակորեն սահմանելու իր պահանջը, բերելու հիմնավորումներ և կցելու հնարավոր ապացույցները: Դա համահունչ է վենետիկյան հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի նախկին առաջարկություններին: Այնուհանդերձ, այդ տեղեկությունները չենք առնելու համար նախատեսված հետևանքը համարժեք չէ, քանի որ տեղեկությունները չենք առնելու դեպքում դիմումը «համարվում է անստորագիր և չի քննվում» (Հոդված 40¹ (3)): Պարզ է, որ նման դիմումները անստորագիր չեն կարող համարվել:

III. ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ

35. Ընտրական օրենսգրքում կատարված փոփոխություններում հաշվի են առնվել ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի և վենետիկյան հանձնաժողովի նախկին համատեղ եզրակացություններում տեղ գտած առաջարկություններից շատերը և դրական տեղաշարժ են ընտրությունների իրավական դաշտում: Այնուհանդերձ, Ընտրական օրենսգիրքը դեռ կարող է բարելավվել, հատկապես ընտրությունների կազմակերպման և անցկացման, ինչպես նաև ընտրությունների վերաբերյալ

բողոքների ներկայացման ու քննման ոլորտներում: Առանձնակի մտահոգություն են պատճառում ընտրությունների վերաբերյալ բողոքներ և դիմումներ ներկայացնելու մասին դրույթները, որոնք չեն ստեղծում ամուր և հստակ իրավական դաշտ ընտրական վեճերի լուծման և ընտրական իրավունքների պաշտպանության համար: Ավելին, իսկապես ժողովրդավարական ընտրությունների անցկացման կարևորագույն նախապայման է մնում Օրենսգրքի բարելավիչ կիրառումը: